




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

71
- 85

Մ-85

NOV 21

Տ. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ

ՏԱՆ ՔԱԶՔԵՐ

ՊԻԵՍ 1 ԳՈՐԾ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՅԱՆԲԻՑ

ՓՈԽԱԴՐ. Գ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

•••••

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ԵՐԵՎԱՆ — 1926

391-71
12-85
պր.

Տ. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ

ՏԱՆ ԲԱԶԲԵՐ

1002
5842

Պիես 1 գործ. գյուղական կյանքից

Փոխադր. Գ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՇՈՂԱՆՔ.—Գեղջկունի, 50 տար., կրոնասեր, վախկոտ. հավատում է Բազմի գոյությանը:

ՄԻՔԵԼ.—Նրա տղան, 15 տար., խելոք, զարգացած, II աստիճ. դպրոցի աշակերտ:

ԳԻՔՈՐ.—Միքելի ընկերը, 18 տար., ժառ խելոք յեվ խորամանկ. նույնպես II աստիճ. դպրոցի աշակերտ:

ՎԱՐԴԱՆ.—Գյուղացի, 60 տար., առողջակազմ, խորամանկ յեվ չար ագգբերով. գլխի ու մորուքի մագերն սպիտակած:

ՄԱՐԹԱ.—Վաղանի գործակիցը, 40 տար., խորամանկ մի կին:

Գյուղացի կանայք յեվ տղամարդիկ:

Գործողությունը կատարվում է մեք ուրում, հայկական խուլ գյուղերից մեկում:

Բեմը ներկայացնում է միջակ գյուղացու նոր կառուցած խրճիթ: Յերեք պատուհան՝ 2-ը հանդիսականների դիմաց և 1-ը հանդիսականների աջ կողմը: Չախ կողմում—թախտ և ավանսյենին մոտ—դուռ: Աջ կողմում մահճակալ: Անկյունում սեղան և շուրջը յերկար նստարաններ:

Ուշ ամառային գիշեր. սենյակը լուսավորվում է նավթի լամպով. բեմի վրա միայն Շողերն է. անհանդիստ, յերեսը խաչակընքելով, դեռուղեն և վազվզում:

ՏԵՍԻՆ 1.

ՇՈՂԵՐ. (Մեծակ) Մեղած քեզ, տեր. հլի, կարծես, քաջքի վռոնոց
եմ լսում. յարար յերբ կաղատվեմ դրա ձեռքից. տանջվեցի,
հալումն յեղա, ել ճար չմնաց: Ո՞ք, ո՞ք, ո՞ք... (Վռո-
նաձայն լսելուց, կանգնում է դռան մոտ): Կարծես թե վռո-
քերի ձայն լսեցի. ինչ լավ կլինի, յեթե մեկը գար. ես ուշ
ժամին յերկուսով ենքան ել սարսափելի չեմ լինի:
(Ներս է գալիս Մարթան):

ՏԵՍԻՆ 2.

ՇՈՂԵՐ ՅԵՎ ՄԱՐԹԱ.

ՇՈՂԵՐ. (Սիրալիր) Այ, բարձր, Մարթա, հազար բարով:

ՄԱՐԹԱ. Բարով, Շողեր ջան. ինչպես ես, լավ ես:

ՇՈՂԵՐ. Փառք աստծո, վոչինչ. հա, աղջի, տես ինչ դժբախտու-
թյուն ես պատահել...

ՄԱՐԹԱ. Ինչ...

ՇՈՂԵՐ. Ենպիսի բան ա, աղջի, վոր ասելն ել ամոթ ա: (Ցած
ձայնով) Քաջքը հանդիստ չի տալիս...

ՄԱՐԹԱ. (Խորամանկորեն, ծնկներին խփելով) Ձե, դժբախտ, եդ ինչ
վատ բան ասացիր, Շողեր:

ՇՈՂԵՐ. Ել խոսք կա. ըսկի հանդիստ չունեմ. այ, քո դալուց քիչ
առաջ ենպես եր պատերը ճանկատում, վռոնում ու տնքում,
քիչ եր մնում լեզիս պատովեր...

ՄԱՐԹԱ. (Ձայելով ծիծաղելով) Խեղճ, խեղճ Շողեր...

ՇՈՂԵՐ. Յեվ եղպես համարյա ամեն իրիկուն. մեկել ուրն ել քիչ
մնաց՝ ինձ պետք ա խեղդեր անիրավ: Պառկած եյի, նոր
եյի աչքերս խփել, հանկարծ տեսնեմ՝ վրաս ինչ-վոր ծան-
րություն ընկավ. ուզում եմ ազատվել, չի լինում. կասես
փետացել եմ. եդ անիծվածն ել բկիցս պինդ բռնել՝ խեղդում
եր. ել հույսս կտրեցի. չեյի կարծում, թե սաղ կմնամ. բայց
մի կերպ ազատվեցի անորենի ճանկերից:

ՄԱՐԹԱ. (Կեղծ կարեկցությամբ) Այ թե ինչ. հանաքը մի կողմ
աղջի. ով է իմանում, մի որ ել իսկապես կխեղդի:

ՇՈՂԵՐ. Յես ել հենց դրանից եմ վախենում:

ՄԱՐԹԱ. Ինչո՞ւ յի վրադ չարացել:

ՇՈՂԵՐ. Աստված վոչ գիտի նրա գլուխն ու արևը. յերևի քիչ եմ
հարգում: Ասում են, յերբ նոր տուն են տեղափոխվում,
նրան ել պետք է հրավիրել, իսկ յես եդ սովորությունը
բոլորովին մոռացել եյի:

ՄԱՐԹԱ. Բա եղտեսակ բան կանեն, աղջի. նրա հետ կարելի յե եղ-
պես վարվել. հենց դրա համար է նա քեզ չարչարում. նրան
հրավիրելը բավական չի—հետդ պիտի բերեյիր: Դեռ ուշ չի,
Շողեր, շտապիր, նրանից ազատվիր, թե չե բանդ բուրդ
ե՛կ կարող ե քեզ իսկապես խեղդել:

ՇՈՂԵՐ. Շատ ել կուզեյի ազատվել, բայց հնար չի լինում... Ե.
ինչե՞ր ասես, վոր չեմ արել, վոր մի հնարքով պրծնեմ դրա-
նից: Բոլոր սրբերին աղոթել եմ, ես նոր խրճիթս Յերուս-
սաղեմի խնկով եմ ծխում և որհնած ջուր եմ շաղ տալիս
պատերին—հենչ, վոչինչ, վոչինչ չի ոգնում:

ՄԱՐԹԱ. Իզուր տեղը փողեր ես մխտում. քաջքից աղոթքներով
ազատվել չի կարելի. նա գրքացների աղոթքներին ե վա-
խենում: Լավ կանես, աղջի, դնաս մեր գեղի զբրացի մոտ:
Նա քեզ սրբերից ել լավ կոգնի:

ՇՈՂԵՐ. Վճրտեղ ա ապրում:

ՄԱՐԹԱ. Դու յիլ բան ասեցիր. մեր գեղում քանիսն ասես՝ կան.
ուզում ես մեկի տեղը սովորեցնեմ:

ՇՈՂԵՐ. Սովորեցրու, Մարթա ջան. լավությունդ չեմ մոռանա:

ՄԱՐԹԱ. Դե լսիր. մեր գեղի վերջում մի պառավ մարդ է ապրում,
անունը Վարդան է... Նա մեծ փորձառություն ունի և շատ
լավ ել ամեն բանի ճարը գտնում ե: Իսկ քաջքերին նա են-
պես ե կախարդում, վոր ել վոչ մի քաջք, վոչ մի չարք չի
մնում... Այ, նրան կանչիր...

ՇՈՂԵՐ. Շատ լավ, Մարթա ջան, շատ լավ. մեկդ հաղար դառնա...

ՄԱՐԹԱ. Նա քեզ կաղատի չար վոգիներին. մենակ թե, աղջի, առա-
տաձեն յեղիր, մի խնայիր—վոչ ալյուրից, վոչ կարտոֆի-
լից և վոչ ել յուղից. յեթե քիչ տաս, կհեղանա հանկարծ ու
գրությունդ ավելի կվատացնի. մեկի տեղ տասը քաջքեր
կթափի գլխիդ:

ՇՈՂԵՐ. Արխային կաց, Մարթա ջան. թաք ազատվեմ, ունեցած-չու-
նեցածս դուրբան. յես ել, տղաս ել քաղցած կմնանք... ամեն
բան կտամ, մենակ թե ազատվեմ:

ՄԱՐԹԱ. Լավ, յերբ ես կանչեիլու...

ՇՈՂԵՐ. Ինչքան շուտ, ենքան լավ, Թեկուզ հենց ես սհաթիս...

ՄԱՐԹԱ. Ինչ կա վոր... հիմի յիլ կարելի չի. արի գնանք նրա մոտ:

ՇՈՂԵՐ. Շնորհակալ եմ, Մարթա ջան, շատ շնորհակալ եմ քեզանից, վոր դու ինձ ոգնում ես. շուտով գնանք: (Շողերը շտապ հագնում է ամառվա ժակետը, գլխին գցում կամ կապում է քաշկիմակ յեմ ուզում է գնալ: Ներս է գալիս Միքելը):

ՏԵՍԻԼ 3.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՄԻՔԵԼ

ՇՈՂԵՐ. Լավ ա, վոր Միքելս ել եկավ. դուրբան քեզ, նստի՛ր տանը. յես Մարթայի հետ գնում եմ գրքացի մոտ:

ՄԻՔԵԼ. (Չարմացած) Իրբացն ինչի՞ց ե պետք:

ՇՈՂԵՐ. Ելի՛, այ վորդի, քաջքը հոգիս հանում ե: Ո՛վ ե իմանում, գուցե եզ գրքացը անորենի հախիցը դա...

ՄԻՔԵԼ. Մայրիկ, ելի՛ դու քո քաջքերի յետեիցն ես ընկած. ամոթ ե, ամոթ:

ՇՈՂԵՐ. Տղաս, բաս ինչ անեմ, վոր նրանք ինձ չարչարում են: Ա՛յ, քիչ առաջ ել—հենց մթնել սկսեց թե չե, նա յիլ սկսեց վռնալ ու տնքալ և պատերը ճթճթացնում եր:

ՄԻՔԵԼ. Ե՛, հետո՞, քեզ ի՞նչ, վոր պատերը ճռթճռթում են: Չգիտես, վոր մեր խրճիթը նոր ե, փայտաշեն ե, իսկ հիմա ամառ ե, և սաստիկ շոգից տախտակները, պարզ ե, վոր չորանում են ու ճթճթում:

ՄԱՐԹԱ. (Ընդհատում է հեզգուրեց) Վոնց չե... տախտակները հենց ենպես, իրանք-իրանց կճթճթան. շատ խելոքն ես. եղալիս բաների մասին դատելու համար դու գեռ շատ ջանել ես: Աղջի, Շողեր, ախանջ մի գնիր նրան. գնանք, քանի ուշ չի, թե չե վարդանն ես կես գիշերին ել չի գա: (Շողերն ու Մարթան գնում են: Միքելը, գլուխը կախ, ման է գալիս բեմի վրա: Ներս է մտնում Գիթորը):

ՏԵՍԻԼ 4.

ՄԻՔԵԼ ՅԵՎ ԳԻԹՈՐ

ԳԻԹՈՐ. (Ուրախ) Բարե, ընկեր: Հը՛, ինչի՞ մասին ես մտածում:

ՄԻՔԵԼ. Հե՛յ, ենպես... մորս հետ չեմ հաշտվում. տարորինակ կին ե. ենպես ե հավատում զանազան քաջքերին ու գրքացներին, վոր ել վոչ մի խոսքով չի համոզվում: Ամեն կերպ աշխատում եմ համոզել, հասկացնել, ջախջախել նրա սխալ

ըմբռնումներն ու սնտախաղաղությունները—վոչինչ, վոչինչ չի ոգնում:

ԳԻԹՈՐ. Այո, Միքել ջան. հին մարդկանց, մանավանդ ծնողների դեմ պայքարելը շատ դժվար ե: Հենց մի բան ասեցիր թե չե՛ վրա յեն պրծնում. «Ո՛ւր եք քթներդ խոթում, ջահելներ. ձի եք դուք, վոր մեզ պառավելիս բան խրատ տաք»: Ճիշտ ե, վոչ թե մենք պլախ սովորեցնենք նրանց, այլ նրանք պետք ե մեզ սովորեցնեն. բայց ի՞նչ արած, վոր մեր ծնողները ձեռքեր են միայն տարիքով, իսկ խելքով, իրենց մտավորով դեռ մանուկներ...

ՄԻՔԵԼ. Ինչ դժվար ե, Գիթոր, յերբ հասակ առած մարդը հիմարություններ ե դուրս տալիս և ինքն իր ասածներին հավատում ե:

ԳԻԹՈՐ. Այո, բայց յես կարծում եմ՝ նրանք մեղավոր չեն, վոր մնացել են մութ, տգետ, թերուս: Նրանք ծնվել ու մեծացել են ցարիզմի որով, իսկ ցարիզմը դիտմամբ եր պահում գյուղացիությունը տգիտության ու խավարի մեջ: Ո՛վ ե իմանում, ընկեր ջան, գուցե մենք յերկուսով ել մեր ծնողներից ավելի շատ չեյինք իմանա, յեթե կառավարությունը չփոխվեր: Չեյինք ունենա մեր գյուղում վոչ դպրոցներ, վոչ ուսուցիչներ և վոչ ել լավ գիտական գրքեր... Այ, ուրիշ բան, յեթե 50 տարուց հետո Խորհրդային Միության մեջ պատահենք մեր ծնողների նման տգետ սնահավատներ: Այն ժամանակ, իսկապես, խավարամիտ քաղաքացիներ ունենալը ներելի չեր լինի, վորովհետեւ մեր ժողովրդական իշխանությունը ձգտում ե ընդհանուր պարտադիր ուսման և մեր բանվորա-գյուղացիական կառավարությունը անգրագիտությունն ու տգիտությունը վերացնելու գործում լաւ ել ե իր բոլոր ուժերը:

ՄԻՔԵԼ. Այդ բոլորը ճիշտ ե, Գիթոր, բայց և այնպես անմիտ բաներ լսելն այնքան ել ախորժելի բան չե: Իսկ գլխավորն այն, ե վոր այդ սնտախաղաղությունը սաստիկ ազդում ե մորս ջղերի վրա և առողջությունը փաստում ե:

ԳԻԹՈՐ. Ինչպե՛ս, ինչպե՛ս. դա ծանր ե: Մայրդ շատ ե տանջվում:

ՄԻՔԵԼ. Սարսափելի: Յերբեմն գիշերները չի քնում: Լալիս ե, աղթում ե ասածուն...

ԳԻԹՈՐ. Ճիշտ վոր դրությունը վատ ե: (Մտաքաղ նստում է նրատառնի վրա. Միքելը նույնպես նստում է Գիթորի դիմաց):

ՄԻՔԵԼ. Ավելի քան համոզված եմ, վոր մայրս վերջիվերջո կխելագարվի:

ԳԻՔՈՐ. Շատ հավանական է. բայց ինչո՞վ բացատրել մորդ աղպսի խոր հավատը:

ՄԻՔԵԼ. Վա՛նչինչ ասել չեմ կարող, վոչ մի պատճառ չգիտեմ:

ԳԻՔՈՐ. Գուցե նրան վախեցրել են. չի կարող պատահել, վոր առանց վորեւե պատճառի նա այդքան ջերմորեն հավատա քաջքերին...

ՄԻՔԵԼ. Հա, ճիշտ է... յեղել են դեպքեր... յես ել մի յերկու անգամ լսել եմ:

ԳԻՔՈՐ. Ի՞նչ ես լսել:

ՄԻՔԵԼ. Ինչ-վոր տարրորինակ տնքոց, վերնահարկում խշխշոց... բայց յես այդ բոլորին վոչ մի նշանակութուն չեմ տվել:

ԳԻՔՈՐ. Իսկ ո՞վ կարող է լինել քո կարծիքով այդ տնքոցի և աղմուկի հեղինակը:

ՄԻՔԵԼ. Չգիտեմ... Համենայն դեպս վոչ քաջքերը:

ԳԻՔՈՐ. (Լռորեն) Իսկ յես, գիտե՞ս ինչ եմ յենթադրում:

ՄԻՔԵԼ. Ի՞նչ:

ԳԻՔՈՐ. Իմ կարծիքով այս բոլոր ոյինբազումթյունները վորոշ նպատակով են կատարվում...

ՄԻՔԵԼ. (Խստ լուրջ, եետակի նայելով Գիքորի կողմը) Դու կարծում ես:

ԳԻՔՈՐ. Նույնիսկ համոզված եմ: Իսկ ո՞ւր գնաց մայրդ:

ՄԻՔԵԼ. Նա Մարթայի հետ մի ինչ-վոր գրքացի մոտ գնաց:

ԳԻՔՈՐ. (Վեր բռնելով տեղից) Ահա, այդպես էլ գիտեյի: Ուրեմն այն, ինչ վոր յենթադրում էյի, ճիշտ է... Մայրդ շառլատանների գոհ է:

ՄԻՔԵԼ. (Լարված ուտադուրյամբ) Ի՞նչ շառլատաններ, ի՞նչ ես դուրս տալիս:

ԳԻՔՈՐ. Ավելի քան համոզված եմ, վոր այդ բոլորը հենց Մարթայի ու գրքացի սարքած գործն է: Յերեի հիմի յել ուղում են իրենց ծրագիրներն իրականացնեն...

ՄԻՔԵԼ. (Մտադրադ) Այո, գուցե ճիշտ լինի քո ասածը, Գիքոր:

ԳԻՔՈՐ. Յեկ քանդենք սրիկաների ծրագիրները:

ՄԻՔԵԼ. Ի՞նչպես:

ԳԻՔՈՐ. Այ թե ինչպես: Հիմա յերեի այստեղ կգան գրքացն ու Մարթան ու կսկսեն իրենց մութ գործերը սարքի բերել: Իսկ մեր դռնադուրյունը այն կլինի, վոր մենք դրանց տեղն ու տեղը հանցանքի ժամանակ բռնենք ու ամբողջ հասարակության առաջ պարզենք նրանց ով լինելը:

ՄԻՔԵԼ. (Վազելովում) Շատ, շատ լավ կլինի, բայց ի՞նչպես անենք:

ԳԻՔՈՐ. Գիտե՞ս ի՞նչ—յեկ դիմակավորվենք: Ո՞ւր են դիմակները:

ՄԻՔԵԼ. Այս սնդուկի մեջն են:

ԳԻՔՈՐ. Այս բոպեյին կնկարենք մեր սիփաթները, թարս կողմով կհագնենք քուրքերը և կթագնվենք: Հենց վոր յեկան, գործի կանցնենք:

(Միմելը հանում է սնդուկից սառանայի յեկ ֆրդի դիմակները):

ՄԻՔԵԼ. Ահա դիմակները:

ԳԻՔՈՐ. Շատ բարի: Դե, շուտ հագնվենք, քանի չեն յեկել: (Վերցնում է դիմակները յեկ նայում): Առ, ես քրդի դիմակը քեզ, իսկ յես կդառնամ սատանա: (Դիմակավորվում են, ապա Միմելը վերցնում է մանեակալի վրայից յերկու ֆուրբեր, տապ տու են տալիս յեկ հագնում): Արդեն պատրաստ ենք. մեկեն—քյուրդ և սատանա... դե, մարշ, տեղերդ. դու մտիւր սեղանի տակ, իսկ յես՝ մահճակալի:

ՄԻՔԵԼ. Լավ: (Դիմում ու Միմելը քագնվում են: Ներս են գալիս Շողերը, Վարդանն ու Մարթան):

ՏԵՍԻԼ 5.

ՎԱՐԴԱՆ. (Ներս մտնելիս) Ասածո՞ւ թագավորությունը թող լինի այստեղ, և թող կորչեն նրա թշնամիները: Թո՛ւհ, թո՛ւհ, թո՛ւհ (ի՛ր տուրջ յերեմ անգամ բում է): Չքացեք, չա՛ր վոգիներ, այս բարեպաշտ տնից: (Շողերին) Շողեր, դու գնա ամբարդ ու ինչ վոր խոստացել ես, պատրաստիր ես ծանր աշխատանքներիս համար. յես ել Մարթայի հետ այստեղ չար վոգիներին կքշենք շեն տնիցդ: Չարը խափանե, բարին առաջնորդե (4—5 անգամ):

ՇՈՂԵՐ. Լավ, քեռի ջան, լավ. միայն թե աղատիր ինձ, ի սեր աստծու, այդ չար վոգիններից: Կյանքումս չեմ մոռանա քո լավությունը: միշտ, միշտ կաղոթեմ հոգուդ փրկության համար:

ՎԱՐԴԱՆ. Լավ, լավ, դրա համար ել յեկել եմ: Չարը խափանե, բարին առաջնորդե (Շողերը գնում է):

ՏԵՍԻԼ 6.

ՆՐԱՆՔ ԱՌԱՆՑ ՇՈՂԵՐԻ

ՄԱՐԹԱ. (Նստելով նստարանի վրա) Դե, ասա տեսնեմ, ինձ ի՞նչ ես տալու:

ՎԱՐԴԱՆ. Վա՛նց թե ինչ. խոսել պրծել ենք:

ՄԱՐԹԱ. Են խոսելը հե՛չ: Ուղում եմ հաստատ իմանալ, վորքան ես տալու եմ չարչարանքների համար: Մի տես, թե մենակ հենց Շողերից ինչքան ես պոկում՝ հինգ փութ ալյուր, յերեք փութ կորեկ, տասը փութ ել կարտոֆիլ...

ՎԱՐԴԱՆ. Մի վախիր, աղջի, յես քեզ չեմ զրկի:

ՄԱՐԹԱ. Ձե, չե: Բարեկամությունը—բարեկամություն, իսկ հաշիվը—հաշիվ: Յերբ գործ ե պահանջվում, ամեն տեղ Մարթան: «Մարթա ջան, գնա սրան վախեցրու, նրան խեղդիր», յերբ վոր վարձատրությանն ենք գալիս, շատ մանր ես բրդում:

ՎԱՐԴԱՆ. Բավական ե վրա տաս, ասացի՝ չեմ զրկի, վերջացավ...

ՄԱՐԹԱ. Շատ ես դու ինձ քաղցր խոստումներով կերակրել: Մի ժամանակ ել Սաքոյենց խանութին եյի խաբխրում. ել ինչ ուլիներ ասես չսարքեցի զլիսին. քիչ եր մնում գովել եր վորքեայրին: Յեվ ինչ ստացա քեզանից (փչում ե ձեռքի վրա)—քամի: Դու մի արարա մթերքներ ստացար նրանից ու լքցիր ամբարդ, դեռ ինչքան ել փող գլխեցիր: Սա: Ո՞ւմ գործն ե սա. յես չեյի՞ շարունակ Շողարին վախեցնում ու խորհուրդ տալիս, վոր քեզ դիմի:

ՎԱՐԴԱՆ. (Բարկացկոտ) Հերիք ե, ասում եմ, աղջի. պահանջդ ինչքան ե:

ՄԱՐԹԱ. Վճնց թե հերիք ե, յես քեզանից վորդորմություն չեմ ուզում, պահանջում եմ՝ ինչ վոր Շողերից ստանաս, հավաքարապես կկիսես հետս: Թե չե պատրաստ ե Ձուլախ Մկոն, աղաչում ե—կերթամ, նրա հետ կաշխատեմ:

ՎԱՐԴԱՆ. Լավ, լավ, ինչ վոր ստանամ, կես կանեմ:

ՄԱՐԹԱ. Ուրեմն կտրվանից բոլոր վաստակը կես ենք անում, հա:

ՎԱՐԴԱՆ. Հա, հա, միայն թե դու վորքան կարելի յես շատ ապուշներ բեր մոտս:

ՄԱՐԹԱ. Եդ կողմից դու արխային կաց:

ՎԱՐԴԱՆ. Լո՛ր, Մարթա, բան եմ ասում:

ՄԱՐԹԱ. Հը, լսում եմ:

ՎԱՐԴԱՆ. Եստեղից վոչ հեռու ա գրում ե վորքեայրի—Սուկազենց Փեփրոնը:

ՄԱՐԹԱ. Գիտեմ, հետո:

ՎԱՐԴԱՆ. Ասում են՝ ունեոր կին ե. հարկավոր ե դրա ջանը գող պցել ե չազ պատառ պոկել դրանից:

ՄԱՐԹԱ. Լավ, ինչ կա վոր. Միայն թե Շողերի հետ գործը զլուխ բերենք ու պրծնենք:

ԳԻՔՈՐ. (Մահճակալի տակից) Այ, գետինը մանեք դուք, տեսեք թե ինչեր են ծրագրել. ուզում են մորս խաբեն: Ձե, քավթաներ, չե, չի հաջողվի:

ՎԱՐԴԱՆ. Յեվ եդ Փեփրոնին խաբելը շատ հեշտ ե... մարդ չունի... տղան դեռ ջահել ե:

ԳԻՔՈՐ. (Թագստի տեղից) Յույց կտամ քեզ, թե վոնց եմ ջահել:

ՎԱՐԴԱՆ. Կանանց խաբելը, համոզելը շատ հեշտ ե, քանզի նրանց

մեջ հավատը դեպի դանազան սատանաներն ու վողիկները ավելի պինդ ե, խորն ե, քան տղամարդոց մեջ:

ՄԱՐԹԱ. Պարզ ե, վոր տղամարդուն խաբելը ավելի դժվար ե. Մի անգամ արդեն փորձել եմ, ե քիչ եր մնում շանսատակ անելին ինձ:

ՎԱՐԴԱՆ. Ձե, դժո՞րթ:

ՄԱՐԹԱ. Ուղեցի Բոսենց Ուիլի գլխին խաղ խաղալ. դե նա մեր գեղի ապուշն ե, մտածեցի ողորկել նրա ապուշությունից ու մի անգամ թագուն մտա նրա խրճիթը, թագ կացա վառարանի տակը ու սկսեցի վոռնալ: Վոռնոցս լսեց թե չե, վերցրեց կացինն ու գոռաց. «Ո՞վ կա եդտեղ. շուտ ձեն հանիր, թե չե կացնով զլուխդ կջախջախեմ»: Յես լոցի: Եդ ապուշն ել հանաք չեր անում. ենպես ուժով կացինը ճոճեց ու իջեցրեց, վոր քիչ եր մնում զլուխս թոցներ: Լեզիս փորս ընկավ, ուշքս հավաքեցի ու հաղիվ ծլկվեցի. ապուշը յետևիցս ընկավ ու գոռալով, վազեմազ. կանչում եր. «Կապանեմ...»

ՎԱՐԴԱՆ. Ոհո, կռիվը բավականի կատաղի յե յեղել:

ԳԻՔՈՐ. (Թագստի տեղից) Սպասեցիք, ավելի կատաղին կտեսնեք:

ՄԱՐԹԱ. Ել չեմ հիշում, թե ինչպես աղաղակեցի նրանից... Եդ դեպքից հետո յերեք շաբաթ հիվանդացա... ջանս սող կտարավում եր:

ՎԱՐԴԱՆ. Դե, տղամարդու հետ գործ ունենալը դժվար ե, դրա համար ել քեզ խորհուրդ եմ տալիս կնանիքոց հետ գործ ունենաս... Ե՛, Ե՛, հերիք մասլահաթ արինք:

ՄԱՐԹԱ. (Տեղից վեր բռնելով) Հա, հա, պրծիր ու գնանք:

ՎԱՐԴԱՆ. Ձե, պրծնելը դեռ շուտ ե: Յես ուրիշ բանի մասին եմ մտածում: Դնանք ամբարը, մի տեսնենք, թե Շողերն ի՞նչպես ե կշռում, հո չի՞ խաբում...

ՄԱՐԹԱ. Դորթ ես ասում, գնանք: (Վարդանն ու Մարթան գնում են, Գիքոն ու Միքելը զլուխները հանում քագսի տեղից յեվ խոսում):

ՏԵՄԻՆ 7.

ՄԻՔԵԼ ՅԵՎ ԳԻՔՈՐ

ԳԻՔՈՐ. Հո լսեցիր:

ՄԻՔԵԼ. Ինչպե՞ս չե, առանց մի բառ բաց թողնելու:

ԳԻՔՈՐ. Այ քեզ քավթառ խաբերաներ: Ինչեր են անում, հա: Այդպես ել գիտելի, վոր մորդ վախը իզուր չի:

ՄԻՔԵԼ. Ձե, յերևակայեցեք միայն, թե ինչ գարշելի սրիկաներ են. իրենք խաբում են ու դեռ ուրիշներին ել հավատ չեն ընծայում:

ԳԻՔՈՐ. Այստեղ, սիրելիս, դարմանալու: Վոչինչ չկա: Մարդ ինքնան խաբերա ու ցածրհոգի յե, այնքան նա ավելի կասկածով ե վերաբերվում գեպի ուրիշները: Իսկ լսեցիր, թե ինչե՞ր են ուզում անել:

ՄԻՔԵԼ. Մորդ գլխին ուզում են խաղ խաղալ, հա:

ԳԻՔՈՐ. Այո...

ՄԻՔԵԼ. Մենք հենց այստեղ, տեղն ու տեղը դրանց մի լավ խրատ կտանք, ե համոզված յեղիր, վոր իրենց այդ շառլատանու-թյուններին ել ընդմիշտ վերջ կտան:

ԳԻՔՈՐ. Այո, դրանց մի լավ խրատել ե պետք. բայց ինչով գանք դրանց հախից, Միքել: Բռուկնքններով... կարող ենք հաղ-թել. նրանք մեզանից մեծ են...

ՄԻՔԵԼ. Ինչի՞ մասին ես մտածում: (Վերցնում ե քագստի տեղից մի հաս փայտ յեվ տալիս Գիքորին) Մտացիր գնա՞րդ:

ԳԻՔՈՐ. Այ քեզ հրաշալի գնա՞րդ. կարելի յե լավ գնգստել. դե, դուն ել պատրաստ յեղիր. չվախենաս, տո՛ւր...

ՄԻՔԵԼ. Կաշխատեմ:

(Իհմի յետեվում լսվում ե խոսակցություն):

ԳԻՔՈՐ. Պահվենք, գալիս են: (Գիքորն ու Միքելը պահվում են, ներս են գալիս Վարդանը, Մարթան ու Շողերը):

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՒՅՆՔ, ՎԱՐԴԱՆԸ, ՄԱՐԹԱՆ ՅԵՎ ՇՈՂԵՐԸ

ՎԱՐԴԱՆ. (Ներս մտնելիս խաչակնքելով) Չորը խափանե, բարին առաջ-նորդե. (3—4 անգամ): Ո՛ւֆ, Շողեր, Բրիտտոսը վկա, շատ դժվար ե գործը գլուխ գալիս: Ինչե՞ր ասես վոր չարի՞ ել աղոթքներ, ել աղաչանք, պաղատանք... հեչ չի ազդում: Տնքում ու լալիս ե անիրավը. դա նշանակում ե՝ տանիցդ չի ուզում հեռանալ:

ՇՈՂԵՐ. (Տխուր) Հապա վոր քարին տամ գլուխս...

ՎԱՐԴԱՆ. (Խորամանկորեն) Մի միջոց ե միայն մնացել. ուզո՞ւմ ես խրճիթիդ բոլոր անկյունները մի տեսակ զորեղ դեղով սրըս-կեմ: (Հանում ե գրպանից մի փոքր սրվակ հեղուկով յեվ ցուց ե տալիս Շողերին):

ՇՈՂԵՐ. Վատքերդ պագեմ. աղաչում եմ, ոգնիր, աղատիր ինձ ես դժբախտությունից:

ՎԱՐԴԱՆ. Բայց գիտե՞ս, Շողեր, ես դեղը շատ թանկ դեղ ե. տասը ռուբլի կարժենա, համաձայն ես:

ՇՈՂԵՐ. Ո՛, ինչ թանկ ե. միքիչ եծան չի՞ կարելի:

ՎԱՐԴԱՆ. Չե, չեմ կարող. դեղը ինձ թանկ արժե:

ՇՈՂԵՐ. Վոր պակաս չի կարելի, ճարս ինչ. կվճարեմ...

ՎԱՐԴԱՆ. Միայն փողերը նաղդ...

ՇՈՂԵՐ. Տալիս եմ, Վարդան պապի, տալիս եմ: (Բաց ե անում սեղուկը-հանում ե փողերը, հաշվում յեվ տալիս Վարդանին, վորը ազահորեն վերցնում յեվ դնում ե գրպանը):

ՎԱՐԴԱՆ. Հիմա ի՞նչ բան. բոլոր վողիներին միանգամից կքչենք: (Շողերին) Աղջիկ, Շողեր, դու միառժամանակ հեռացիր, մինչե յես գործս վերջացնեմ: (Շողերը գնում ե, Վարդանն ու Մարթան նայում են իրար յերեսին ու յերկար ծիծաղում. պա-կեր):

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՅ ՇՈՂԵՐԻ

ՄԱՐԹԱ. (Շարունակում ե ծիծաղել) Ի՛նչ խորամանկն ես, շեյթան պառավ. սրան տեսեք, թե ինչե՞ր մոգոնեց... ինչ-վոր ջրով անկյուններ ե սրսկելու (ծիծաղում ե):

ՎԱՐԴԱՆ. (Ծիծաղելով) Յեթե հեղուկ մեջտեղ չբերելի, հապա տասը ռուբլին վորտեղից կստանայի: (Հանում ե գրպանից հինգա-նոց քղբադրամ յեվ տալիս ե Մարթային) Ա՛ռ բաժինդ:

ՄԱՐԹԱ. Ո՛ւֆ, շատ խորամանկն ես, Վարդան, շատ: (Պահում ե փողերը յեվ օտարակում ե հո.հո.ալ. այդ ժամանակ Գիքորն արագո-րեն հանում ե գլուխը քագստի տեղից յեվ դարձյալ պահում: Մարթան, նկատելով այդ, սասիկ հեղում ե) Ա՛, ա՛...

ՎԱՐԴԱՆ. Ի՛նչ պատահեց քեզ, աղջիկ, ի՛նչ պատահեց:

ՄԱՐԹԱ. (Դողում ե, ցույց տալով մահճակալի տակը) Այնտեղ, այնտեղ մի ինչ-վոր բան կա:

ՎԱՐԴԱՆ. (Չարմացած) Ո՞վ կա այդտեղ:

ՄԱՐԹԱ. (Դողում ե) Չգիտեմ... սարսափելի... պողերով... մաղերով...

ՎԱՐԴԱՆ. (Հանգստացնելով) Դե, լավ, հանգստացիր: Ո՞վ կարող ե լինել այստեղ. քեզ յերևացել ե միայն: (Վարդանը մոտենում ե մահճակալին յեվ ուզում ի նայել մահճակալի տակը. այդ ժամանակ դուռ ե գալիս Գիքորը, Վարդանին գցում ե տակը յեվ սկսում ե ծեծել: Վարդանը բղավում ե. Մարթան ել, վա-րենի նիչեք արձակելով, վազվզում ե բեմի մի ծայրից մյուս ծայր: Ուզում ե վախճել: Միքելը դուռ ե գալիս քագստի տեղից յեվ հարձակվում ե Մարթայի վրա: Աղմուկը սաստկա-նում ե. Գիքորն ու Միքելը փայտով ծեծում են Վարդանին ու Մարթային):

ՎԱՐԴԱՆ. Ո՛, ո՛, դարավո՛ւր, ոգնեցե՛ք...

ՄԱՐԹԱ. Ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք...

ԳԻՔՈՐ. Ա՛ռ, ա՛ռ քեզ (խփում է), քալթառ սրիկա. վերջապես ընկար թակարդը (ծեծը շարունակում է. վարդանը մտնում է սեղանի տակ, իսկ Մարթան՝ բախտի, Գրսից ձայներ՝ «Ի՞նչ աղմուկ է. ո՞վ է դարավուլ կանչում: Ո՞ւմ են սպանում»):

ՇՈՂԵՐԻ ԶԱՅՆԸ. (Իրսից) Վայ քոռանամ յես... գրբաց վարդանին Մարթայի հետ խեղդում են... յես նրանց կանչեցի, վոր չար վոգիներին քչեն տնիցս, իսկ քաջքերը վրա յեն պրծել ու խեղդում են նրանց... վա՛յ, վա՛յ...

ԶԱՅՆԵՐ. (Իրսից) Այ քեզ բռն՝ պեաք ե ազատել: Ո՞վ կգնա աղատելու: Հանկարծ ինքդ կընկնես նրանց ճանկերը... (Իբրեւ ու Միքելը դադարեցնում են ծեծը, հանում դիմակները յեվ փութերը: Վարդանն ու Մարթան շարունակում են ճչալ):

ԳԻՔՈՐ. (Բաց անելով դուռը) Մի վախե՛ք, ներս յեկե՛ք. այստեղ սառանաներ չկան, ձեզ պես մարդիկ են միայն:

ՇՈՂԵՐ. (Իրսից) Գի՛քո՛ր, եզ դ՛ու յես:

ԳԻՔՈՐ. Այ՛ո, յես ու Միքելը: (Շորդերը վախով ներս է գալիս. զգուշությամբ, նրա յետեվից մտնում են գյուղացի տղամարդիկ յեվ կանայք):

ՏԵՍԻԼ 10.

ՆՈՒՅՆՔ, ՇՈՂԵՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ

ՇՈՂԵՐ. Ի՞նչ էք անում այստեղ. ո՞վ էր եղպես կանչում:

ԳԻՔՈՐ. Քաջքն ու սատանեն, են վոր քեզ տանջում ու չարչարում էին. յերկուսին ել բռնեցինք և ենպիսի դաս տվինք, վոր ել չեն համարձակվի քեզպեսներին խարել...

ՇՈՂԵՐ. (Վախով) Ո՛ւր են նրանք:

ԳԻՔՈՐ. Ա՛հա, մեկը այստեղ սեղանի տակն է:

ՄԻՔԵԼ. Մյուսն ել այստեղ թախտի տակն է:

ԳԻՔՈՐ. (Վարդանին) Ե՛յ, դ՛ու, քալթառ սատանա, դ՛ուրս յեկ:

ՄԻՔԵԼ. Հը՛, պառավ փերի. դե շուտ, դուրս կորիր այգտեղից:

ԳԻՔՈՐ. Չե՛ք լսում, ինչ է: Լսվ, վոր հոժար կամքով չեք ուղում, մենք դուռով կհանենք ձեզ այգտեղից: Հապա՛, Միքել, անցիր գործի: (Իբրեւ փառում է Վարդանի վտտից, իսկ Միքելը—Մարթայի ծամերից: Գյուղացիներից յերկուսն առանձնանում յեվ ոգնում են Գիբորին ու Միքելին յեվ դուրս հանում քագսի տեղից Վարդանին յեվ Մարթային: Գյուղացուց դեմքերին սասիկ վախ է նկատվում: Նրանք իրար են կպցում յեվ մեկը մյուսի յետեվը թագնվում: Վարդանին ու Մարթային կանգնեցնում են կողմ—կողմի բեմի կենտրոնում):

ՇՈՂԵՐ. (Վախից ուժի գալով) Դ՛որթ վոր վարդանն ու Մարթան են. ԳԻՔՈՐ. Քեզ տանջողները հենց սրանք են:

ՇՈՂԵՐ. Ի՞նչ, ի՞նչ...

ԳԻՔՈՐ. Այ՛ո, այ՛ո, սրանք: Դու համողված եյիր, վոր քեզ չարչարողը, խեղդողը քաջքն է, բանից դուրս յեկավ, վոր սրանք են, սրանք:

ՇՈՂԵՐ. (Զարմացած) Ինչե՛ր ես դուրս տալիս, Գիբոր:

ԳԻՔՈՐ. Ինձ չէս հավատում, տղիդ հարցրու...

ՄԻՔԵԼ. Ճիշտ է, մայրիկ, ձիշտ. գլխիդ եսքան խաղ խաղացողները ես քալթառներն էյին:

ԳԻՔՈՐ. Այդ բոլոր ոյինքազությունների նպատակն է յեղել՝ վորքան կարելի յե շատերիդ խարել և կողոպտել. ձեզ պես միամիտ կանանցից ստանալ թե հաց, թե փող:

ՄԻՔԵԼ. (Յույց տալով Մարթային) Այ, մայրիկ, սա յե շարունակ ճանկըսել մեր խրճիթի պատերը, վոռնոց գցել ու տնքացել:

ՇՈՂԵՐ. Սա՞... (Մոտենում է Մարթային) Եզ դ՛ու էյիր ուրեմն եսպես ահուգողի մեջ գցել ինձ, հա՛. այ, քրքրվի քու միսը, հա՛. գետինը մոռես դու, Մարթա, գետինը, Յես ել, ես հիմար գլխովս, հավատում էյի քեզ, կատարում խորհուրդներդ, շնորհակալ էյի լինում...

ԶԱՅՆԵՐ. Ուրեմն ինձ ել է խարել. ինձանից ել տասը փութ ցորեն տարան: Յես ել յոթը փութ ալյուր տվի: (Սպառնում են բռնեցնեքով):

ՇՈՂԵՐ. (Վարդանին): Յեա տուր փողերս. շուտ, տասը մանեթը տուր: (Վարդանը հանում է գրպանից ճիճգ ու յեվ նշան անում Մարթային, Մարթան ել հանում է ճիճգ ու յեվ տալիս Շողերին): Սրանց տեսեք, փողերն արդեն բաժանել են: Այ, սատկեք...

ԳԻՔՈՐ. (Վարդանին ու Մարթային) Դեհ, առաջ ընկեք դեպի գյուղխորհուրդ: Գյուղխորհուրդը շաղատաններիդ արարքները անպատիժ չի թողնի. մարշ: (Ընդհանուր ծիծաղ. Գիբորն ու Միքելը տանում են Վարդանին յեվ Մարթային):





ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0312954

13.303

